ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

29 հոկտեմբեր 2014թ. N 295

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Մ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գարեգինյան

Ձեզ եմ ներկայացնում Ծաղկաձոր համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 76, 77-Ն, 78,79-Ն,80 և 81 որոշումները:

Առդիր՝ 48 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Գարիկ Բաղալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբեր 2014 թվականի թիվ 76

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը:

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 82-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Համայնքային սեփականություն համարվող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
3. Ծաղկաձոր քաղաքի սեփականություն համարվող հողամասեր աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը սահմանելու մասին:
4. Ծաղկաձոր քաղաքի մինչև 2020 թվականը կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին:
5. "Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն" համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԻ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբեր 2014 թվականի թիվ 77-Ն

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 82-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի "Ծաղկաձորի քաղաքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին" թիվ 82-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները ՝

7) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) “39200.0հազ. դրամը փոխարինել 36200.0հազ. դրամ'':

14) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) “10000.0 հազ. դրամը փոխարինել 13000.0 հազ. դրամ'':

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբեր 2014 թվականի թիվ 78

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդհոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Օտարել քաղաք Ծաղկաձոր Խ.Կեչառեցու փողոց թիվ 36 (նախկին հասցեն՝ քաղաք Ծաղկաձոր Խ.Կեչառեցու փողոց թիվ 18) հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված 0.0163 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող հողամասը ուղղակի վաճառքով:
2. Հողամասերի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով:
3. Ուժը կորցրած ճանաչել 2014 թվականի հոկտեմբերի 10-ի "Համայնքային սեփականություն համարվող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին" թիվ 73 որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԱՐԶ ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴ 03001885

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբեր 2014 թվականի թիվ 79-Ն

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետերով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Օտարել աճուրդային կարգով համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասը՝

Հողամասի հասցեն	Չափը	Նպատակային և գործառնական նշանակությունը	Կադաստրային ծածկագիր
ք.Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 11/1	0.2հա	հատուկ պահպանվող, հանգստի համար	07-005-0025-0064

2.Հողամասի մեկնարկային գինը սահմանել դրա կադաստրային արժեքի հարյուր տոկոսի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբեր 2014 թվականի թիվ 80

ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ծաղկաձոր քաղաքի մինչև 2020 թվականը կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հաստատված
Ծաղկաձոր քաղաքային
համայնքի ավագանու
2014 թվականի հոկտեմբերի 24-ի
թիվ 80 որոշմամբ

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ծաղկաձոր 2014 թ.

Տվյալ ԿԷԶԳԾ-ն մշակվել է Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից՝ Էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ, Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք ծրագրի և Հայաստանի համայնքների միության տեխնիկական աջակցությամբ և ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

Ծաղկաձորի քաղաքապետարան

ԿԷԶԳԾ-ի հաստատման վերաբերյալ ք. Ծաղկաձորի քաղաքապետարանի որոշում

Բովանդակություն

ԲԱԺԻՆ 1. Ներածություն 5

1.1. Քաղաքի հակիրճ նկարագրությունը 6

1.2. Ծրագրի նպատակները և ընդհանուր ռազմավարությունը 8

1.3. Նորմատիվ-իրավական բազան 9

ԲԱԺԻՆ 2. Էներգետիկ ռեսուրսների արտադրության, մատակարարման և սպառման վերլուծություն 13

2.1. Ծաղկաձոր քաղաքի էներգետիկ հաշվեկշիռն ըստ էներգառեսուրսների տեսակների 14

2.2.1. Համայնքի շենքերի և շինությունների կողմից էներգիայի վերջնական սպառումը 19

2.2.2. Էներգիայի վերջնական սպառումը բազմաբնակարան շենքերում և առանձնատներում 22

2.2.3. Վերջնական էներգիայի սպառումը տրանսպորտային ոլորտում 23

ԲԱԺԻՆ 3. Արտանետումների կադաստրի մշակումը. ընթացիկ իրավիճակի գնահատումը 26

3.1. Արտանետումների աղբյուրները 26

3.2. Արտանետումների բազային կադաստրի վերլուծությունը 26

3.3. Բազային տարվա հիմնավորված ընտրությունը 28

ԲԱԺԻՆ 4. ԿԷԶԳԾ գործողության ամբողջ տևողության համար ոլորտային արտանետումների կրճատման միջոցառումները 30

4.1. Համայնքային շենքեր և շինություններ 30

4.2. Բազմաբնակարան շենքեր 32

4.3. Առանձնատնային կառուցապատման գոտի 32

4.4. Քաղաքային փողոցային լուսավորության համակարգ 33

4.5. Տրանսպորտային սեկտոր 33

ԲԱԺԻՆ 5. Գործողությունների ծրագրի մշակման և ներդրման վարչական կառուցվածքը 35

5.1. ԿԷԶԳԾ-ի մշակման և ներդրման վարչական կառուցվածքը 35

5.2. Մոնիտորինգ և վերահսկում 36

ԲԱԺԻՆ 6. Ֆինանսավորման աղբյուր 37

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 39

Հավելված 1 39

Հավելված 2 43

ԲԱԺԻՆ 1. Ներածություն

Կայուն էներգետիկ զարգացման ապահովումը Ծաղկաձոր քաղաքի ռազմավարական զարգացման կարևոր ուղղությունն է: Ծաղկաձորի քաղաքապետարանը միացել է «Քաղաքապետերի դաշնագիր» կլիմայի պահպանման Եվրոպական նախաձեռնությանը 2009 թ.: Քաղաքապետերի դաշնագիրը պարտավորեցնում է տեղական և մարզային կառավարման մարմիններին բարձրացնել էներգաարդյունավետությունը և ավելացնել էներգիայի այլընտրանքային աղբյուրների ծավալները իրենց տարածքներում: Հետևելով այս պարտավորություններին, Համաձայնության մասնակիցները ձգտում են մինչև 2020թ. առնվազն 20%-ով կրճատել CO_2 արտանետումները՝ բազային տարվա արտանետումների մակարդակի համեմատ:

Ք. Ծաղկաձորը, ստորագրելով «Քաղաքապետերի դաշնագիրը».

- մի կողմից՝ բացառիկ հնարավորություն է ստացել լիովին փոխակերպել իր քաղաքային էներգետիկան էներգետիկ կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան, օգտագործելով Եվրոպայի քաղաքների փորձը,

- մյուս կողմից՝ պարտավորություններ է ստանձնել, որոնք պահանջում են էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացման և էներգետիկ անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման նպատակով քաղաքի առկա մարդկային և ռեսուրսային ներուժի մոբիլիզացում:

Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի (ԿԷԶԳԾ) մշակումը՝ Ծաղկաձոր քաղաքի քաղաքային ենթակառուցվածքների էներգաարդյունավետության բարձրացման երկարատև ռազմավարության իրականացման և շրջակա միջավայրի պահպանման հաջորդ քայլն է:

ԿԷԶԳԾ մշակման գործընթացը նախատեսում է.

- Ծաղկաձոր քաղաքի էներգետիկ ոլորտի և ըստ սպառողների կատեգորիաների էներգիայի աղբյուրների օգտագործման կառուցվածքի նկարագրությունը,
- քաղաքում էներգիայի սպառման կրճատման և էներգիայի այլընտրանքային աղբյուրների ավելացման ընդհանուր ռազմավարության մշակումը,
- ածխաթթու գազի արտանետումների կադաստրի մշակումը:

ԿԷԶԳԾ-ի հիմնական նպատակն է կազմակերպչական, տնտեսական, տեխնիկական, տեխնոլոգիական և ներդրումային երկարատև համալիր միջոցառումների սահմանումը, որանց իրականացումը կապահովի էներգաարդյունավետության բարձր մակարդակին հասնելը, էներգետիկ ռեսուրսների օգտագործման կրճատումը, CO_2 արտանետումների կրճատումը և քաղաքի բնապահպանական իրավիճակի բարելավումը:

Փաստաթուղթը նախատեսում է համալիր միջոցառումներ բնակարանային ոլորտում և պետական հաստատությունների հատվածում:

Ստորագրելով «Քաղաքապետերի դաշնագիրը» ք. Ծաղկաձորը պատրաստակամություն է հայտնել մոբիլիզացնել առկա բոլոր մարդկային և ֆինանսական ռեսուրսները՝ լավագույն Եվրոպական մակարդակում կայուն էներգաարդյունավետ զարգացման ապահովման համար:

1.1 Քաղաքի հակիրճ նկարագրությունը

Պատմական ակնարկ

Ծաղկաձոր (նախկինում՝ Կեչառիս, իսկ մինչև 1947 թ.՝ Դարաչիչակ), քաղաք Հայաստանի Կոտայքի մարզում, Թեղենիսի արևելյան լանջին: 1958 թվականից Ծաղկաձորը քաղաքատիպ ավան էր, իսկ 1984 թ. ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի հրամանագրով դասվել է քաղաքների կարգին: Կլիման մեղմ է, առողջարար:

Որպես բնակավայր Ծաղկաձորը հայտնի է դեռևս III-V դարերից: XVII դարի սկզբին քոչվորական ցեղերը, գրավելով բնակավայրի հողերը, այն կոչեցին Դարաչիչակ: Գրեթե ողջ XVIII դարի ընթացքում տարածաշրջանը հանդիսանում էր թուրք-պարսկական բախումների թատերաբեմ: Ռուս-պարսկական պատերազմից հետո 1828թ. մարզը մտնում է Ռուսական կայսրության կազմի մեջ և միացվում է Էրիվանի նահանգին:

Քաղաքը պահպանեց իր հայտնի հանգստավայրի կարգավիճակը նաև խորհրդային իշխանության օրոք: Հովտում գործում էին երկու տասնյակից ավել պիոներական ճամբարներ, հանգստյան տներ, որտեղ հանգստանում էին քաղաքացիներ ԽՍՀՄ ողջ տարածքից: 1968թ. Մեքսիկայում կայանալիք Օլիմպիական խաղերի նախաշեմին Ծաղկաձորում կառուցվեց խոշոր սպորտային համալիր, որտեղ՝ Մեխիկոյի պայմաններին մոտիկ պայմաններում, մարզվում էին տարբեր սպորտաձևերի ներկայացուցիչներ: 1972թ. Թեղենիս լեռան լանջերին կառուցվեց ճոպանուղի, ինչի շնորհիվ Ծաղկաձորը հայտնի դարձավ նաև որպես լեռնադահուկային հանգստավայր:

Հետխորհրդային ժամանակաշրջանում Ծաղկաձորը շարունակում է գրավել լեռնային հանգստի և ձմեռային սպորտաձևերի սիրահարներին մեղմ կլիմայի և հանգստացողներին տրամադրվող հարմարավետ պայմանների շնորհիվ:

Աշխարհագրական դիրքը

Քաղաքը գտնվում է լեռների լանջերին, մարզկենտրոն Հրազդան քաղաքից 6 կմ դեպի հյուսիս-արևմուտք և մայրաքաղաք Երևանից 50 կմ՝ հյուսիս-արևելք: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը մոտ 1850 մ է: Քաղաքային համայնքի տարածքը կազմում է 1618,3 հա, որից համայնքային սեփականություն է հանդիսանում 1228,7 հա, գյուղատնտեսական նպատակներով օգտագործվելին՝ ընդամենը 59,2 հա: Քաղաքից դեպի հյուսիս և հարավ տարածվում են լեռնաշղթաներ, որոնք մասամբ ծածկված են անտառներով: Շրջապատող լեռների բարձրագույն գագաթներն են Թեղենիսը (2851 մ) և Ծաղկունյացը (2820 մ): Քաղաքի տարածքով հոսում է Տանձաղբյուր գետակը, որը լցվում է Մարմարիկ գետը, որն իր հերթին հանդիսանում է Հրազդան գետի վտակը:

Կլիմայական պայմանները

Ձմեռը մեղմ է, արևային օրերի թիվը հասնում է 270-ի: Միաժամանակ, հովտին բնորոշ են ձմեռային առատ տեղումները և ձյան ծածկույթի հաստությունը, որը հասնում է մինչև 1,4 մ: Դահուկային շրջանը տևում է նոյեմբերի կեսերից մինչև ապրիլի կեսերը: Հունվարին միջին ջերմաստիճանը կազմում է -6°C, ջեռուցման շրջանի միջին ջերմաստիճանը՝ -1,6°C, տևողությունը՝ 201 օր: Տարեկան տեղումների քանակը կազմում է 600-700 մմ: Ծաղկաձորում օդերևութաբանական կայան կամ կետ գոյություն չունի: Կողմնորոշվելով ծովի մակարդակից ընդամենը շուրջ 50-60 մ ավելի բարձր և շուրջ 6 կմ հեռավորության վրա տեղաբաշխված Հրազդան քաղաքի օդերևութաբանական կայանի նորմատիվ տվյալներով կարելի է փաստել հետևյալ ցուցանիշները. հորիզոնական մակերևույթի գումարային տարեկան ճառագայթումը՝ 1726 կՎտժ/մ^2, որը մի փոքր բարձր է միջին հանրապետական ցուցանիշից, ուղիղ ճառագայթման միջին տարեկան կշռամասը՝ 61%: Համայնքի տարածքը հողմառատ չէ, հունվարին հողմի միջին արագությունը 2,4 մ/վ է, որը էներգետիկ տեսանկյունից համարվում է չափազանց աղքատ պոտենցիալով օժտված հողմահոս:

Բնակչությունը

Քաղաքը գրաավիչ է բնապահպանական զբոսաշրջության տեսակետից: Խորհրդային շրջանում Ծաղկաձորում կառուցվեցին մեծաթիվ հյուրանոցներ, պանսիոնատներ, մանկական և սպորտային հանգստի ու մարզումների համալիրներ: Ետխորհրդային շրջանում դրանց թիվը զգալիորեն ավելացավ, այդ թվում նաև մասնավոր ներդրումների հաշվին: 2012 թ. դրությամբ համայնքում գրանցված հյուրանոցային և հանգստյան համալիրների ընդհանուր թվաքանակն էր 40, ընդհանուր տեղերի քանակը՝ շուրջ 4000: 2013 թ. դրությամբ քաղաքի բնակչությունը կազմում է 1700 մարդ: Բնակչության զբաղվածության մակարդակն ըստ Ծաղկաձորի քաղաքապետարանի տվյալների շուրջ 75 % է, հիմնականում հյուրանոցային և ծառայությունների ոլորտների շնորհիվ: Քաղաքի այցելուների ընդհանուր թիվը 2013 թ. կազմել է մոտ 230 հազար մարդ:

Բնակելի ֆոնդը

Քաղաքային համայնքում բազմաբնակարան շենքերի թիվը 7-ն է: Դրանք դեռևս խորհրդային տարիներին՝ 1970-80-ական թվականներին, կառուցված 2...6 հարկանի 11-ից մինչև 50 բնակարաններով տուֆե շարվածքով շենքեր են: Ներկայումս բոլոր բնակարանները ամբողջությամբ սեփականաշնորհված և գազաֆիկացված են: Սեփական առանձնատնային կառուցապատման գոտիներում շինությունների թիվը կազմում է շուրջ 400, գրեթե 125 հազ.մ^2 ընդհանուր մակերեսով:

Կրթական, մշակութային և առողջապահական հիմնարկներ

Քաղաքում գործում է միակ միջնակարգ դպրոցը շուրջ 150 աշակերտով և մեկ նախադպրոցական ուսումնական հաստատություն (մանկապարտեզ): Ամբուլատոր բժշկական հաստատությունը կահավորված է անհրաժեշտ բուժսարքավորումներով և ունի շտապ օգնության սպասարկման մեկ ավտոմեքենա: Քաղաքում գործում են Օրբելի եղբայրների տուն-թանգարանը,

մանկական արվեստի դպրոցը, որը տեղաբաշխված է մանկապարտեզի շենքում, քաղաքային գրադարանը և Հայաստանի շախմատի ակադեմիան: Այս հաստատությունների մեծ մասն ունի գազով ջեռուցվող լոկալ կաթսայատներ:

1.2. Ծրագրի նպատակները և ընդհանուր ռազմավարությունը

«Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը» հանդիսանում է «Քաղաքապետերի դաշնագիր» Համաձայնության մասնակիցների հիմնական փաստաթուղթը, որով հաստատվում են մասնակիցների կողմից ստանձնած պարտավորությունները և դրանց կատարման ուղիներն ու մեխանիզմները: Գործողությունների ծրագիրը սահմանում է ստանձնած պարտավորությունների կատարման երկարաժամկետ ռազմավարությունը և նախանշում նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործողությունները:

Ծրագրի հիմնական նպատակները

Ծրագրի հիմնական նպատակն է բազային տարուց մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում հասնել ջերմոցային գազերի (հիմնականում՝ ածխաթթու գազի) արտանետումների առնվազն 20% կրճատման: Ենթադրվում է, որ Ծրագիրը հնարավորություն կընձեռի տեղական ինքնակառավարման մարմիններին իրատեսորեն գնահատել համայնքի էներգաարդյունավետության խնդիրները գործունեության բոլոր հիմնական ոլորտներում և ճշգրիտ պատկերացում ունենալ էներգախնայողության խրախուսման գերակայական ուղղությունների վերաբերյալ:

Անհրաժեշտ է Ծրագիրը դիտարկել որպես մի փաստաթուղթ, որը ժամանակի ընթացքում կարող է այս կամ այն չափով վերանայվել, հաշվի առնելով համայնքային զարգացման գործընթացների հետևանքով արտանետումների մակարդակի փոփոխությունները: Սա հնարավորություն է տալիս փոփոխություններ կատարել նույնիսկ արդեն իսկ հաստատված Ծրագրում, որն իր հերթին հնարավորություն է տալու տեղական ինքնակառավարման մարմնին.

- բացահայտել նախատեսված միջոցառումների իրականացման արդյունավետությունը,
- ճշգրիտ գաղափար կազմել առաջնային էներգիայի սպառման ծավալների և օգտագործման արդյունավետության վերաբերյալ,
- կազմել համայնքի ամենամյա էներգետիկական հաշվեկշիռը,
- մշակել համայնքային զարգացման առավել իրատեսական ծրագրեր:

Այսպիսով, ԿԷԶԳԾ-ն որոշ չափով «ճկուն» փաստաթուղթ է և, հետևաբար, այն կարող է կրել որոշակի փոփոխություններ արդեն իսկ իրականացման ընթացքում՝ հաշվի առնելով կուտակված փորձը և հմտությունները: Սակայն, պետք է հիշել, որ հիմնական թիրախային նպատակը՝ ջերմոցային գազերի արտանետումների առնվազն 20%-ով կրճատման պարտավորությունը, մնում է անփոփոխ:

Երկարաժամկետ կանխատեսումներ

«Քաղաքապետերի դաշնագիր» համաձայնգիրը տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով փաստաթուղթ է և ջերմոցային գազերի արտանետումների

կրճատման և էներգաարդյունավետության բարձրացման պարտավորությունները, ծրագրավորվող միջոցառումները և գործողությունները այդ մարմինների իրավասության առարկաներ են: Ենթադրվում է, որ տեղական իշխանությունները կլինեն համապատասխան գործողությունների նախաձեռնողները սեփական շենքերում, շինություններում, տրանսպորտային միջոցներում և այլուր, էներգաարդյունավետության բարձրացման հարցերում օրինակ ծառայելով բնակչության և այլ սեփականատերերի համար: ԿԷԶԳԾ-ն կարող է մշակվել նաև ավելի հեռահար, այսինքն, 2020թ. հետո ընկած ժամանակաշրջանի համար, սակայն, այդ դեպքում սահմանային 2020թ. համար նշված մակարդակները պետք է ապահովվեն:

1.3. Նորմատիվ-իրավական բազան

Գործողությունների ծրագիրը մշակվել է հաշվի առնելով հետևյալ փաստաթղթերի դրույթները:

- ***« Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 07.03.2001 թ.)***

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները: Օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, էներգետիկայի բնագավառում երկրի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից են տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի և նոր՝ էներգաարդյունավետ և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը:

Վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանելու համար Օրենքի 59-րդ հոդվածը սահմանում է, որ էլեկտրաէներգիայի (հզորություն) արտադրության լիցենզիայի տրամադրման օրվանից 15 տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

- ***« Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 09.11.2004թ.)***

Օրենքի նպատակը էներգախնայողության իրականացման և վերականգնվող էներգետիկայի զարգացման պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է, ուղղված՝

- Հայաստանի Հանրապետության տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդմանը.
- Հայաստանի Հանրապետության տնտեսական և էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացմանը.
- էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծմանը և ծառայությունների կազմակերպմանը.
- շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանը:

Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության հետևյալ սկզբունքները.

- Էներգախնայողության իրականացումը, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող իրավական և տնտեսական մեխանիզմների ստեղծումը և կիրառումը.
- Ներկրվող էներգետիկ ռեսուրսների ծավալների աճի դեպքում՝ աճի նկատմամբ էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման գերակայության ապահովումը.
- Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև դրան նպաստող նոր տեխնոլոգիաների կիրառման աճի ու զարգացման ապահովումը.
- Էներգախնայողության և վերականգնվող էներետիկայի զարացմանն ուղղված միջոցառումներում բնական ռեսուրսների արդյունավետ (խնայողաբար) օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության խնդիրների գերակայության ապահովումը.
- Էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի էներգաարդյունավետ արտադրության խրախուսումը, այդ թվում՝ ինքնավար էնեգաարտադրողների համար.
- պատական (ազգային) նպատակային ծրագրերի իրագործումը:

➢ ***Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիր (2007թ.)***

Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում նպատակների ձևավորումը և դրանց հասնելու համար միջոցառումների սահմանումը:

Ազգային ծրագիրն ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը.

- Հայաստանի տնտեսության կայուն զարգացմանը նպաստում.
- Հայաստանի տնտեսությունում էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացմամբ մեղմելու երկրի կախվածությունն արտաքին մատակարարներից.
- Վառելիքաէներգետիկ պաշարների արդյունավետ օգտագործումը և տնտեսության մեջ վերականգնվող էներգետիկ աղբյուրների առավելագույն ներառումը և դրանց ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը:

Ծրագրում բերվում է էլեկտրա, ջերմա և գազամատակարարման համակարգերում, տրանսպորտային և բնակարանային ոլորտներում էներգախնայողության ներուժի գնահատականը, ինչպես նաև տրվում է վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման ներուժի և էներգախնայողության ներուժի տնտեսապես արդարացված օգտագործման միջոցառումների գնահատատումը:

- ***Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի իրականացմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների ծրագիր, 04.11.2010թ. (ՀՀ կառավարության N43 որոշում)***

Էներգախնայողության գործողությունների ծրագիրը նախատեսում է բնակելի շենքերի, հանրային ծառայությունների, արդյունաբերության, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտներում էներգաարդյունավետության բարձրացում: Էներգետիկայի ոլորտի ազգային վիճակագրական համակարգի ստեղծումը համարվում է առաջնահերթ խնդիր: Ծրագրի փուլային իրականացումը, որը պետք է ավարտվի մինչև 2018 թ., նախատեսում է.

- նորմատիվ-իրավական դաշտի կատարելագործում.
- քաղաքաշինական օրենսգրքի մշակում՝ հաշվի առնելով շենքերի և շինությունների էներգետիկ բնութագրերը (ջեռուցում, տաք ջրի մատակարարում, օդափոխություն, օդորակում) և հաստատելով որոշակի սահմանաչափեր.
- էներգախնայողության տեխնիկական կանոնակարգերի, ազգային ստանդարտների, տեխնիկական պայմանների մշակում.
- ազգային ստանդարտների և նորմերի ներդաշնակեցում միջազգայինների հետ և այլն:

Երկրում ընդունված է ևս մի շարք ռազմավարական փաստաթղթեր, ուղղված երկրի էներգետիկ անվտանգության բարձրացման, տնտեսության տարբեր ոլորտներում էներգաարդյունավետության բարձրացման և էներգիայի վերականգնվող աղբյուրների ավելի լայն օգտագործման խթանմանը:

- ***Հայաստանի տնտեսական զարգացման ենթատեքստում էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարություն (2005թ.)***
- ***Ազգային անվտանգության ռազմավարության դրույթների հիման վրա ՀՀ էներգետիկայի նախարարության գործողությունների ծրագիր (2007թ.)***
- ***Էներգաարդյունավետության ոլորտի ազգային գործողությունների ծրագիր (2010 թ.)***
- ***Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, 14 դեկտեմբերի 2012թ.***

Ծրագիրը մշակվել և հաստատվել է Ծաղկաձոր քաղաքի ավագանու կողմից որպես իրավական ակտ «Ծաղկաձոր քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիր (2013-2016 թթ.)»: Ծրագրում բերված են տեղական ինքնակառավարման մարմնի գնահատականները սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ և նշված են այդ խնդիրների լուծման ուղիները: Սակայն, ծրագրում նշված չեն թվարկված խնդիրների համար անհրաժեշտ հստակ միջոցառումները, ֆինանսական ռեսուրսների ծավալները և դրանց աղբյուրն ու տրամադրման պայմանները: Ընդհանուր

առմամբ, ծրագիրը բավականին խորն է վերլուծում քաղաքային համայնքի հնարավորությունները, քաղաքային տնտեսության թույլ և ուժեղ կողմերը, ընդգծում նպատակներն ու սպասվող արդյունքները:

- ***Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ (2013թ.)***

ԲԱԺԻՆ 2. Էներգետիկ ռեսուրսների արտադրության, մատակարարման և սպառման վերլուծություն

Էներգառեսուրսների արտադրության և սպառման առումով Ծաղկաձոր քաղաքը յուրահատուկ է: Սա բացատրվում է նրանով, որ տվյալ բնակավայրը մեծ չէ չափսերով և բնակիչների թվով և էներգտիկ ռեսուրսների արտադրության ու մատակարարման մեծ ենթակառուցվածքի զարգացումը նպատակահարմար և տնտեսապես ընդունելի լուծում չէ:

Հայաստանում էներգետիկայի ոլորտում գնագոյացման և լիցենզավորման հարցերով զբաղվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ), որը ստեղծվել է 1997թ.: ՀԾԿՀ-ի կարգավորող գործառույթները տարածվում են էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման, 5,8 ՄՎտ-ը գերազանցող դրվածքային հզորությամբ կենտրոնացված ջերմամատակարարման, ջրամատակարարման, ոռոգման և հեռահաղորդակցման կապի ոլորտների վրա:

Ծաղկաձոր քաղաքում գործնականում բացակայում է կենտրոնացված ջերմամատակարարումը և բոլոր սպառողները, առանց բացառության, օգտվում են որպես առաջնային ռեսուրս բնական գազ օգտագործող ջերմամատակարարման անհատական համակարգերից: Հայաստանի էներգետիկ ռեսուրսների շուկայում գործում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ մենաշնորհային ընկերությունը (2014թ. հուլիսից՝ «Գազարդ-Հայաստան»), որը Հայաստանում գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի սեփականատերն է:

Հատուկ ուշադրության է արժանի տվյալ էներգետիկ ռեսուրսի սակագինը, որն միադրույք է և ամսական սպառման ծավալից կախված՝ երկաստիճան: Սա նշանակում է, որ բնական գազի վերջնական սակագինը կախված է ամսական սպառման ծավալից: Այսպիսով, գործում է երկու սակագնային մակարդակ՝ ամսական մինչև 10 հազ. մ^3 բնական գազ սպառողների համար և այն սպարողների համար, որոնք դրանից ավել են օգտագործում: Այդ դեպքում, միևնույն սպառողի համար սակագինը կարող է տարվա տարբեր ամիսներին տարբեր լինել և այդ տարբերությունը կարող է հասնել մինչև 40%-ի: Սակագնային այս համակարգը գործում է 1997 թ. և արդյունավետ ու ռացիոնալ չէ:

Փորձը ցույց է տալիս, որ այն չի խթանում էներգախնայողությունը, այլ հակառակը, որոշ հանգամանքներում «խրախուսում» է էներգետիկ ռեսուրսների գերածախսը: Այս խնդիրը բազմիցս բարձրացվել է ՀԾԿՀ-ի առջև, սակայն, Հանձնաժողովը դեռևս չի արձագանքել մասնագետների կոչերին վերանայել բնական գազի գնագոյացման քաղաքականությունը:

Էլեկտրաէներգետիկայում նույնպես գործում են վերջնական սպառողի համար միադրույք, երկգոտի սակագներ (ցերեկային՝ 7.00 մինչև 23.00 և գիշերային՝ 23.00 մինչև 7.00), որոնց մակարդակը կախված է էլեկտրաէներգիայի լարումից: Քանի որ ներքին շուկայի համար էլեկտրաէներգիայի 40%-ը արտադրվում է ջերմային էլեկտրակայաններում, ապա էլեկտրաէներգիայի սակագները ուղղակիորեն կախված են բնական գազի սակագներից: Էլեկտրական էներգիայի բաշխման մենաշնորհային սեփականատերն ու օպերատորն է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն:

2.1. Ծաղկաձոր քաղաքի էներգետիկ հաշվեկշիռն ըստ էներգառեսուրսների տեսակի

Ծաղկաձոր քաղաքի էներգետիկ հաշվեկշիռը կազմվել է բյուջետային ոլորտի հաստատությունների, բնակչության և տրանսպորտի կողմից սպառված բնական գազի, էլեկտրական էներգիայի, բենզինի և դիզելային վառելիքի վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման վրա:

Օգտագործված էներգառեսուրսների վերաբերյալ տվյալների հնարավորինս առավել հավաստի վերլուծության նպատակով դիտարկենք քաղաքի բնակչության փոփոխության գծապատկերը 2011-2013թթ. ընթացքում՝ նկար 2.1.1:



Նկար 2.1.1. Ծաղկաձոր քաղաքի բնակչության թվաքանակի փոփոխությունը 2011-2013թթ. ընթացքում

Ինչպես կարելի է նկատել նկար 2.1.1-ի գծապատկերից, ետխորհրդային շրջանում Հայաստանի բնակավայրերի մեծամասնությանը բնորոշ միգրացիոն երևույթներն առանձնապես չեն ազդել Ծաղկաձորի վրա և 2010-ականների սկզբում քաղաքի բնակչության թիվը կայունացել է շուրջ 1700 մարդու մակարդակի վրա:

Աղյուսակ 2.1.1-ում բերված են էներգառեսուրսների հիմնական տեսակների սպառման տարեկան ծավալները:

Աղյուսակ 2.1.1.Էներգառեսուրսների սպառման ծավալները Ծաղկաձոր քաղաքում 2011-2013թթ. (ՄՎտժ)

Էներգառեսուրսի տեսակը	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Բնական գազ	8361,5	8311,7	8405,8
Էլեկտրական էներգիա	1294,6	1255,2	1160,3
Ընդամենը՝ հեղուկ վառելիքներ	1052	1039,4	1011
այդ թվում՝ բենզին	*900*	*891,2*	*871*
այդ թվում՝ դիզելային վառելիք	*152*	*148,2*	*140*
Ընդամենը	10708,1	10606,3	10577,1

Աղյուսակ 2.1.1-ի տվյալները վկայում են բոլոր էներգառեսուրսների, բացառությամբ բնական գազի, սպառման ծավալների թեկուզ աննշան, սակայն կայուն նվազման միտումների մասին: 2013 թվականին Ծաղկաձոր քաղաքն ընդհանուր առմամբ օգտագործել է 10577,1 ՄՎտժ էներգառեսուրսներ, որը գրեթե 1%-ով ցածր է բազային տարվա ցուցանիշից և մոտավորապես նույնքան՝ 2012թ. սպառումից: Իրավիճակի ավելի ակնառու ներկայացման նպատակով դիտարկենք նկար 2.2-ը:



Նկար 2.1.2.էներգառեսուրսների սպառման դինամիկան Ծաղկաձոր քաղաքում 2011-2013 թվականներին (ՄՎտժ)

Նկարի գծապատկերներից նկատելի է իրականում էներգառեսուրսների սպառման նվազումը: Նույնը չի կարելի ասել բնական գազի վերաբերյալ, որի սպառումը 2013թ. շուրջ 1,01%-ով կամ 44,2 ՄՎտժ-ով գերազանցել է 2011թ. ցուցանիշը: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ Ծաղկաձորի բնակչության ճնշող մեծամասնությունը սեփական ավտոմեքենաները վերասարքավորել է բենզինից անցնելով հիմնականում մեթան պարունակող բնական գազի:

Ինչ վերաբերում է էլեկտրական էներգիային և հեղուկ վառելիքներին, ապա դրանց օգտագործումն այդ նույն ժամանակահատվածում նվազել է համապատասխանաբար 11,5 և 4%-ով:

Նկար 2.1.3-ում ներկայացված են քաղաքի ընդհանուր էներգահաշվեկշռում յուրաքանչյուր էներգառեսուրսի մասնաբաժինները: Ամենամեծ կշռամասը բնական գազինն է,շուրջ 79%, որը բնական է, քանի որ այն հանդիսանում է ''ամենաարդիական'' ռեսուրսը: Հետևաբար, էներգասպառման նվազմանն ուղղված հիմնական միջոցառումները պետք է կապված լինեն այդ էներգառեսուրսի հետ:

Էլեկտրական էներգիայի կշռամասը կազմում է ընդամենը 11%, իսկ հեղուկ վառելիք-ներինն ավելի ցածր՝ 10%: Այսպիսի իրավիճակն ուղղակի անթույլատրելի է, քանի որ գործնականում բացակայում է էներգառեսուրսների զանազանումը (դիվերսիֆիկացիան) և Ծաղկաձոր քաղաքում էներգետիկ իրավիճակը փաստորեն ամբողջությամբ կախված է

բնական գազից, մի հանգամանք, որը հակասում է էներգետիկական անվտանգության սկզբունքներին:



Նկար 2.1.3.Էներգառեսուրսների մասնաբաժինները Ծաղկաձորի 2013թ. ընդհանուր էներգասպառման մեջ

2.1.2 աղյուսակում ներկայացված է հիմնական սպառողների կողմից բնական գազի սպառման կառուցվածքը:

Աղյուսակ 2.1.2.Բնական գազի սպառումը Ծաղկաձոր քաղաքում 2011-2013թթ. (ՄՎտժ)

Սպառողներ	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Բյուջետային կազմակերպություններ	516,3	489,8	441,1
Բնակչություն	3514,7	3263,6	3369,5
Տրանսպորտային ոլորտ	4330,5	4558,4	4695,2

Նկար 2.1.4. Ծաղկաձոր քաղաքում 2011-2013 թվականներին բնական գազի սպառման դինամիկան (ՄՎտժ)

Բնական գազի սպառման արդյունքների վերլուծության հիման վրա ստացվել են հետևյալ տվյալները.

- 2013 թ. խոշորագույն սպառողն է հանդիսանում տրանսպորտային ոլորտը 4695,2 ՄՎտժ ցուցանիշով, որը 8%-ով կամ 364,7 ՄՎտժ-ով գերազանցում է 2011թ. ցուցանիշը:
- Բյուջետային ոլորտը հանդիսանում է նվազագույն սպառողը՝ 441,1 ՄՎտժ, որը 14,6%-ով կամ 75,2 ՄՎտժ-ով ցածր է 2011թ. սպառումից:
- Տրանսպորտային ոլորտի կշռամասը հավասար է 56%, բնակչությանը՝ 39%, տարբեր մակարդակի բյուջետային կազմակերպություններինը՝ 5% (տես նկար 2.1.5):



Նկար 2.1.5. Հիմնական սպառողների կողմից բնական գազի օգտագործման մասնաբաժինները

Ծաղկաձորում էլեկտրական էներգիայի սպառման ցուցանիշների հաշվարկի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2.1.3-ում:

Աղյուսակ 2.1.3. Էլեկտրաէներգիայի սպառումը Ծաղկաձոր քաղաքում 2011-2013 թթ. (ՄՎտժ)

Սպառողներ	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Բյուջետային կազմակերպություններ	249,1	232,2	232,3
Բնակչություն	1045,5	1023	928



Նկար 2.1.5. Ծաղկաձոր քաղաքում 2011-2013 թթ. էլեկտրաէներգիայի սպառման դինամիկան (ՄՎտժ)

Վերը բերված տվյալները վկայում են էլեկտրաէներգիայի սպառման նվազման աննշան, սակայն, այնուամենայնիվ, կայուն միտումների մասին: 2013թ. բնակչության սպառումը կազմել է 928 ՄՎտժ, որը 12%-ով կամ 117,5 ՄՎտժ-ով ցածր է 2011թ. ցուցանիշից: Բյուջետային կազմակերպությունները կրճատել են սպառումը 7%-ով կամ 16,8 ՄՎտժ-ով:

Էլեկտրական էներգիայի սպառման կառուցվածքը բերված է նկար 2.1.6-ում:



Նկար 2.1.6. Հիմնական սպառողների կողմից էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը

2.2.1. Համայնքի շենքերի և շինությունների կողմից էներգիայի վերջնական սպառումը

Էներգիայի սպառման այս ոլորտն ընդգրկում է համայնքային շենքերն ու շինությունները, այսպես կոչված, «երրորդային» (ոչ համայնքային) շենքերն ու շինությունները և քաղաքային փողոցների լուսավորությունը: Թվարկված բոլոր օբյեկտներում հիմնական էներգակիրներն են էլեկտրական էներգիան և բնական գազը: Աղյուսակ 2.2.1-ում բերված են այդ օբյեկտներում էներգակիրների օգտագործման տվյալները:

Աղյուսակ 2.2.1.Ծաղկաձոր քաղաքի բյուջետային հաստատությունների էներգակիրների ծախսը 2011-2013 թթ. (ՄՎտժ)

Էներգակիր	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Էլեկտրական էներգիա	291,1	232,2	232,3
Բնական գազ	516,3	489,8	441,1



Նկար 2.2.1. Ծաղկաձոր քաղաքի բյուջետային հաստատությունների 2011-2013թթ. էներգակիրների սպառման դինամիկան (ՄՎտժ)

Ծաղկաձոր քաղաքի բյուջետային հաստատությունների կողմից սպառած էներգառեսուրսների վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ քաղաքային իշխանությունները նախաձեռնում են որոշակի էներգախնայողական միջոցառումներ: Որպես ապացույց պետք է նշել բնական գազի սպառման կրճատումը 2013թ. բազային տարվա (2011թ.) համեմատությամբ 14,6%-ով կամ 75,2 ՄՎտժ-ով, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սպառման կրճատումները 20,2%-ով կամ 58,8 ՄՎտժ-ով:

Ծաղկաձոր քաղաքի բյուջետային հաստատությունների կողմից սպառած բնական գազի ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ բյուջետային ֆինանսավորման օբյեկտների բերված է աղյուսակ 2.2.2:

Աղյուսակ 2.2.2. Ծաղկաձոր քաղաքի բյուջետային հաստատությունների 2011-2013թթ. բնական գազի սպառման ծավալները, ՄՎտժ

Սպառողը	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Քաղաքապետարան	90,8	52,8	68,5
Մանկապարտեզ	109,4	115,0	154,1
Գրադարան	106,7	109,8	99,2
Միջնակարգ դպրոց	187,5	193,6	104,0
Ամբուլատորիա	21,8	18,6	15,3



Նկար 2.2.2 Ծաղկաձոր քաղաքի բյուջետային հաստատությունների 2011-2013թթ. բնական գազի սպառման դինամիկան, ՄՎտժ

Համայնքային շենքերում և շինություններում ամառային ամիսների միջին սպառումը կազմում է ջեռուցման շրջանի միջին ամսական սպառման միայն 5-10%-ը, որն ակնհայտորեն հանդիսանում է գազային ջեռուցման ազդեցության արդյունք:

Ծաղկաձոր քաղաքի բյուջետային ոլորտի հաստատությունների բնական գազի սպառման տվյալների վերլուծության արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

- Էներգախնայողության տեսանկյունից վատագույն իրավիճակն ստեղծվել է մանկապարտեզում, քանի որ 2011թ. համեմատությամբ 2013 թվականին էներգիայի սպառումն ավելացել է 40,9%-ով կամ 44,7 ՄՎտժ-ով:
- Լավագույն վիճակը միջնակարգ դպրոցում է, ուր բնական գազի սպառումը կրճատվել է 44,5%-ով կամ 83,5 ՄՎտժ-ով:
- Բնական գազի ամենամեծ կշռամասը բաժին է ընկնում մակապարտեզին՝ շուրջ 34,9%, և հետևաբար, էներգախնայողական միջոցառումների կազմակերպումը մանկապարտեզում խիստ արդիական է:

Ծաղկաձոր քաղաքի բյուջետային ոլորտի կողմից օգտագործած էլեկտրաէներգիայի քանակության մասին տեղեկատվությունն ամփոփված է աղյուսակ 2.2.3-ում:

Աղյուսակ 2.2.3. Ծաղկաձորի բյուջետային ոլորտի 2011-2013թթ. սպառած էլեկտրաէներգիան (ՄՎտժ)

Սպառողը	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Քաղաքապետարան	7,1	6,0	9,2
Մանկապարտեզ	3,5	3,4	1,6
Գրադարան	0,9	0,7	2,0
Միջնակարգ դպրոց	4,2	5,4	4,9

Ամբուլատորիյա	2,2	0,8	2,2
Ջրառատի տնտեսություն	14,9	15,5	15,8
Ավտոմոբիլների կայանատեղի	4,1	5,1	5,9
Քաղաքային լուսավորություն	212,2	195,3	190,7

Տվյալ էներգակրի ամենախոշոր սպառողը փողոցային լուսավորությունն է, որի մասնաբաժինը 82,1% է: Սակայն, այդ ցուցանիշը 2013թ. նվազել է 10,1%-ով կամ 21,5 ՄՎտժ-ով 2011թ. համեմատությամբ: 2013թ. դրությամբ լուսավորությամբ ապահովված քաղաքային փողոցների գումարային երկարությունը կազմում է 4150 մ, որոնցում տեղադրված են 395 հատ լուսատուներ: 2011-2013թթ. ընթացքում այդ լուսատուներից 56 նատրիումային բարձր ճնշման լամպերը փոխարինվել են լուսադիոդային լամպերով: Նախատեսվում է մինչև 2020թ. նույնպիսի փոփոխություն կատարել մնացած բոլոր լամպերի հետ: Քաղաքապետարանը ծրագրում է նաև ընդարձակել փողոցային լուսավորության ցանցը և մեծացնել լուսավորության համակարգի աշխատանքի օրական տևողությունը

Համայնքային շենքերին և շինություններին բնութագրական է էլեկտրաէներգիայի սպառման սեզոնային խիստ անհավասարաչափությունը: Աղյուսակ 2.2.3-ում բերված առաջին 3 շենքերի համար էլեկտրաէներգիայի միջին ամսական սպառումը ջեռուցման շրջանում (նկար 2.2.3, ստորին կորը) գրեթե 2,5 անգամ գերազանցում է ջեռուցման շրջանից դուրս ընկած ժամանակաշրջանի միջին ամսական սպառումը:

Ամբողջությամբ գազաֆիկացված այդ երեք շենքերի կողմից էլեկտրաէներգիայի այդպիսի անհավասարաչափ սպառումը դժվար է հիմնավորել ձմեռային շրջանում լուսավորության ինտենսիվության կամ տևողության ազդեցությամբ: Ակնհայտ է, որ այդ շենքերում օգտագործվում են նաև էլեկտրական տաքացուցիչներ պահեստային կամ պիկային էներգիայի աղբյուրների կարգավիճակով: Նմանատիպ պատկերն է նաև ավտոկայանատեղիում և Ջրառատի տնտեսությունում:

Նկար 2.2.3-ում բերված է շենքերի այդ խմբի 2013թ. էլեկտրաէներգիայի ամսական սպառման գծապատկերը (նկարում՝ վերին կորը):



Նկար 2.2.3. Համայնքային շենքերի էլեկտրաէներգիայի սպառումը 2013թ.

2.2.2. Էներգիայի վերջնական սպառումը բազմաբնակարան շենքերում և առանձնատներում

Ծաղկաձոր քաղաքի բնակչությունը 2013թ. կազմել է 1700 մարդ, որոնք մեծամասամբ բնակվում են 1-2-հարկանի մասնավոր առանձնատներում: Վերլուծության համար աղյուսակ 2.2.2.1-ում բերված են Ծաղկաձոր քաղաքի բնակչության կողմից օգտագործված էներգառեսուրսների տվյալները:

Աղյուսակ 2.2.2.1. Ծաղկաձոր քաղաքի բնակչության կողմից սպառված էներգառեսուրսները 2011-2013 թթ. (ՄՎտժ)

Էներգակիր	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Էլեկտրական էներգիա	1045,5	1023	928
Բնական գազ	3514,7	3263,6	3269,4



Նկար 2.2.2.1.Ծաղկաձոր քաղաքի բնակչության կողմից էներգառեսուրսների սպառման դինամիկան 2011-2013թթ. (ՄՎտժ)

Բնական գազի սպառումը բնակչության կողմից 2013թ.-ին նվազել է 7%-ով կամ 245,3 ՄՎտժ-ով բազային 2011թ. համեմատությամբ: Էլեկտրաէներգիայի սպառման նվազումը 2013թ.-ին կազմել է 11,2% կամ 117,5 ՄՎտժ:



Նկար 2.2.2.2. Ծաղկաձոր քաղաքի բնակչության ընդհանուր սպառման մեջ էներգառեսուրսների մասնաբաժինները

Ծաղկաձորի բնակչության կողմից սպառված էներգիայի ընդհանուր հաշվեկշռում բնական գազի մասնաբաժինն է 77,9%, և էլեկտրաէներգիայինը՝ ընդամենը 22,1%:

2.2.3. Վերջնական էներգիայի սպառումը տրանսպորտային ոլորտում

Ծաղկաձորի տրանսպորտային ոլորտը կարելի է ներկայացնել հետևյալ տվյալներով.

- Քաղաքում գրանցված մասնավոր մարդատար ավտոմեքենաների թիվը՝ 269
- Մասնավոր բեռնատար ավտոմեքենաների թիվը՝ 27
- Հատուկ նշանակության ավտոմեքենաների թիվը՝ 11
- Մարդատար ավտոմեքենաների միջին տարեկան վազքը՝ 20000 կմ
- Բեռնատար ավտոմեքենաների միջին տարեկան վազքը՝ 8000 կմ
- Երևան-Ծաղկաձոր (մոտ 55 կմ) և Հրազդան-Ծաղկաձոր (մոտ 7 կմ) ուղեգծերով երթևեկող փոքր և միջին տարողության միկրոավտոբուսների տարեկան թիվը՝ շուրջ 4000 հատ
- Բոլոր տեսակի ավտոմեքենաների շուրջ 80% օգտագործում է 7900 կկալ/նմ^3 կալորիականության սեղմված բնական գազ, մնացած 20%-ը՝ հեղուկ շարժիչային վառելիքներ:

Աղյուսակ 2.2.3.1-ում բերված են Ծաղկաձորի տրանսպորտային ոլորտում էներգառեսուրսների սպառման տվյալները:

Աղյուսակ 2.2.3.1. Ծաղկաձոր քաղաքի տրանսպորտում էներգառեսուրսների սպառումը (ՄՎտժ)

Վառելիքի տեսակը	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Բնական գազ	4330,5	4558,4	4695,2
Բենզին	152	148,2	140
Դիզելային վառելիք	900	891,2	871
Հեղուկ շարժիչային վառելիքներ (ընդամենը)	1052	1039	1011



Նկար 2.2.3.1. Ծաղկաձոր քաղաքի տրանսպորտային ոլորտում էներգառեսուրսների սպառման դինամիկան 2011-2013թթ. (ՄՎտժ)

Այսպիսով, 2013 թվականին հեղուկ շարժիչային վառելիքների (բենզինի ու դիզելային վառելիքի) սպառումը նվազել է բազային 2011թ. համեմատությամբ, իսկ բնական գազի սպառումն աճել է 8,4%-ով կամ 364,7 ՄՎտժ-ով:



Նկար 2.2.3.2. Ծաղկաձորի տրանսպորտային ոլորտի ընդհանուր էներգասպառման մեջ էներգառեսուրսների մասնաբաժինները, %

Այսպիսով, Ծաղկաձորի քաղաքի տրանսպորտային ոլորտի ընդհանուր էներգասպառման մեջ բնական գազի մասնաբաժինը կազմում է 82,3%, դիզելային վառելիքինը՝ 15,3% և բենզինինը՝ 2,5%:

ԲԱԺԻՆ 3. Արտանետումների կադաստրի մշակումը և ընթացիկ իրավիճակի գնահատումը

Ծաղկաձոր քաղաքի արտաներումների կադստրի հաշվարկման հիմքում որպես բազային ընդունված է 2013թ., քանի որ լիարժեք և արժանահավատ տեղեկատվություն օգտագործ-ված էներգակիրների վերաբերյալ հաջողվեց ձեռք բերել սկսած այդ տարուց:

3.1. Արտանեռումների աղբյուրները

Ծաղկաձոր քաղաքի մինչև 2020թ. կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրում ներառված ածխաթթու գազի (CO_2) բազային արտանետումների հիմնական աղբյուրներն են հանդիսանում.

- բնակչությունը՝ արտանետումներն առաջանում են բնակելի տներում բնական գազի այրման և էլեկտրական էներգիայի օգտագործման արդյունքում,
- բյուջետային կազմակերպությունները՝ արտանետումներն առաջանում են բնական գազի և էլեկտրական էներգիայի օգտագործման արդյունքում,
- տրանսպորտային ոլորտը՝ արտանետումներն առաջանում են հեղուկ շարժիչային վառելիքների (բենզին, դիզելային վառելիք) և բնական գազի օգտագործման արդյունքում:

3.2. Արտանետումների բազային կադաստրի վերլուծությունը

Արտանետումների բազային կադաստրի (ԱԲԿ) կազմման ժամանակ օգտագործվում են կլիմայի փոփոխության հարցերով զբաղվող Միջկառավարական փորձագիտական խմբի կողմից առաջարկվող արտանետումների գործակիցները: Էներգակիրների տարեկան սպառման բացարձակ ծավալները հիմք են հանդիսանում արտանետումների բազային

կադաստրի հաշվարկման համար: Ածխաթթու գազի (CO_2) արտանետումների բազային կադաստրը ներկայացված է աղյուսակ 3.2.1-ում:

Աղյուսակ 3.2.1. CO_2-ի արտանետումները Ծաղկաձորում 2011-2013 թթ., տոննա

Էներգառեսուրսի տեսակը	Հաշվետու տարի		
	2011թ.	2012թ.	2013թ.
Բնական գազ	1689,0	1679,0	1698,0
Էլեկտրական էներգիա	282,2	273,6	252,9
Բենզին	224,1	221,9	216,9
Դիզելային վառելիք	40,6	39,6	37,4
Ընդամենը	2235,9	2214,1	2205,2

2011թ. դրությամբ Ծաղկաձոր քաղաքում ածխաթթու գազի (CO_2) արտանետումները կազմել են 2235,9 տ, որը համայնքի բնակչության յուրաքանչյուր շնչի հաշվով կազմում է 1,267 տ CO_2 / (մարդ.տարի): Այդ տեսակարար ցուցանիշը 2013թ. որոշ չափով աճել է կազմելով 1,297 տ CO_2 / (մարդ.տարի), այն դեպքում, երբ բացարձակ ցուցանիշը նվազել է 1,38%-ով կամ 30,8 տ:

Բազային 2011թ. տվյալների համար արտաներումների ամփոփ բաշխումն ըստ աղբյուրների բերված է նկար 3.2.1-ում:



Նկար 3.2.1. CO_2-ի արտանետումների բաշխումն ըստ էներգակիրների

Ներկայացված պատկերից կարելի է պարզորոշ նկատել, որ առավելագույն արտանետումներն առաջանում են բնական գազի այրման հետևանքով՝ 76%, իսկ նվազագույն ծավալները կապված են դիզվառելիքի օգտագործման հետ՝ 2%:

Բազային 2011թ. CO_2-ի արտանետումների ծավալներն ըստ օգտագործման ոլորտների և արտանետումների աղբյուրների ունեն հետևյալ տեսքը:

Աղյուսակ 3.2.2. CO_2 -ի արտանետումների բաշխումն ըստ ոլորտների և աղբյուրների բազային 2011 թվականին (տոննա)

Էներգառեսուրսի տեսակը (աղբյուրի տեսակը)	Բյուջետային կազմակերպու-թյուններ	Բնակչություն	Տրանսպորտ	Ընդամենը
Բնական գազ	104,3	710,0	874,8	1689,0
Էլեկտրական էներգիա	54,3	227,9		282,2
Բենզին			224,1	224,1
Դիզելային վառելիք			40,6	40,6
Ը ն դ ա մ ե ն ը				2235,9

Ածխաթթու գազի (CO_2) արտանետումների՝ ըստ էներգիայի օգտագործամն ոլորտների, բաշխումը ներկայացված է նկար 3.2.2-ում:



Նկար 3.2.2. CO_2-ի 2011թ. արտանետումների բաշխումն ըստ ոլորտների

Բերված տվյալների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

- CO_2-ի արտանետումների մեծ մասը բնական գազի օգտագործման հետևանք է,
- Արտաետումների գերկաշիռ մասը բաժին է ընկնում տրանսպորտային ոլորտին՝ 51%, և բնակչությանը՝ 42%:

Այսպիսով, Գործողությունների ծրագրի հիմնական խնդիրը վերը նշված ոլորտներում ածխաթթու գազի արտանետումների կրճատման ապահովումն է:

3.3. Բազային տարվա հիմնավորված ընտրությունը

Արևելյան գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրների համար բազային տարին ընտրվում է հաշվի առնելով առավել հավաստի և ներկայացուցչական վիճակագրական տվյալների ստացման հնարավորությունները: Ի տարբերություն եվրոպական երկրներին ԿԷԶԳԾ-ի մշակման համար 1990թ.՝ որպես բազային տարվա առաջարկությանը, Արևելյան գործընկերության և Կենտրոնական Ասիայի մասնակիցներին խորհուրդ է տրվում բազային տարվա համար ընտրել ԿԷԶԳԾ-ի մշակման տարուն հնարավորինս մոտ տարեթիվ, որի համար կարող են հավաքվել և մշակվել արժանահավատ տվյալներ:

Հայտնի է, որ ետխորհրդային ժամանակաշրջանի սկզբնական տասնամյակներում նախկին ԽՍՀՄ-ի երկրները կրել են խորը տնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Այդ շրջանում ջերմոցային գազերի արտանետումների ծավալները նույնպես կտրուկ նվազել են: Մասնավորապես, օրինակ, Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների մակարդակը 1980-ական թվականներին կազմել է շուրջ 25 մլն. տոննա (ըստ CO_2-ի համարժեքի), այն դեպքում, երբ 2000-ական թվականներին այդ ցուցանիշը կրճատվել է գրեթե հնգապատիկ: .

Այդ առումով Ծաղկաձոր քաղաքի Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի (ԿԷԶԳԾ) մշակման համար նպատակահարմար է ընտրել 2011թ., հիմք ընդունելով հասարակական հաստատությունների և ֆիզիկական անձանց կողմից էներգակիրների սպառման վերաբերյալ հավաստի տվյալները, ինչպես նաև ողջ ետխորհրդային ժամանակաշրջանում համայնքի բնակչության թվի կայունացման միտումները:

ԿԷԶԳԾ-ի նպատակն է մինչև 2020 թվականը կրճատել հիմնական ջերմոցային գազի (CO_2) արտանետումների ծավալը բազային տարվա համեմատությամբ առնվազն 20%-ով: Դա նշանակում է, որ CO_2-ի արտանետումները պետք է կրճատվեն 447,2 տոննայով, այսինքն, տարեկան 2235,9 տ CO_2-ից (բազային տարվա ցուցանիշը) մինչև 1788,7 տ CO_2/տարի 2020թ.-ին: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մինչև 2020թ. կրճատել բնական գազի սպառումը 23,5%-ով կամ 1962,3 ՄՎտժ-ով, ինչպես նաև էլեկտրական էներգիայի սպառումը 39,5%-ով կամ 512,4 ՄՎտժ-ով:

ԲԱԺԻՆ 4. ԿԷԶԳԾ գործողության ամբողջ տևողության համար ոլորտային արտանետումների կրճատման միջոցառումները

Ծաղկաձոր քաղաքը համարվում է Հայաստանի Հանրապետության խոշորագույն և լավագույն լեռնադահուկային հանգստավայրերից մեկը: Սա բնակչության մեծամասնության և քաղաքային բյուջեի հիմնական աղբյուրն է: Բայց, չնայած դրան, քաղաքը ցանկանում է լինել նաև էներգաարդյունավետ: Վերը նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել Գործողությունների ծրագրով նախատեսված և առաջարկված՝ էներգաարդյունավետությանն ուղղված համալիր միջոցառումները:

4.1. Համայնքային շենքեր և շինություններ

Ծաղկաձոր քաղաքի համայնքային շենքերն ու շինությունները, ինչպես և ցանկացած այլ բնակավայրում, էներգաարդյունավետության առումով կարևորագույներից մեկն են, քանի որ էներգակիրների համար վճարումը իրականացվում է հենց քաղաքային բյուջեի միջոցներից:

Չնայած այն հանգամանքին, որ պետական շենքերի թիվը մեծ չէ, այնուամենայնիվ, տեղական բյուջեի վրա ծանրաբեռնվածությունը բավականին մեծ է:

Այս խնդրի դրական լուծումն է էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների իրականացումը քաղաքի բոլոր պետական հաստատություններում, առանց բացառության: Հիմնական միջոցառումները պետք է ուղղված լինեն բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման ծավալների կրճատմանը հետևյալի հաշվին.

- Էներգետիկ կառավարման համակարգի ստեղծում և ներդրում.
- էներգակիրների սպառման մոնիտորինգի **ամենօրյա** ծրագրի գնում կամ մշակում.
- էներգետիկ աուդիտների անցկացում.
- շենքերի զննում՝ մեխանիկական վնասման բացահայտման նպատակով, ներառյալ դրանց տանիքների և նկուղների ամբողջականության ստուգումը և դրանց վերանորոգման/բարելավման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.
- նկուղների, ձեղնահարկերի, ինչպես նաև աստիճանավանդակների ջերմամեկուսացում.
- էլեկտրական ցանցերի ստուգում.
- բոլոր շինություններ ջերմակիրների մատակարարման կարգավորում.
- անդրադարձնող էկրանների տեղադրում արտաքին պատերի այն հատվածներում, որտեղ տեղադրված են ջեռուցման սարքերը.
- նկուղային և ձեղնահարկային տարածքներում ջեռուցման համակարգի խողովակների ջերմամեկուսացում.
- տարարածքների օդափոխության ժամանակի սահմանափակում (օպտիմալացում).
- դռների և պատուհանների փոխարինում կամ ջերմամեկուսացում.

- շենքերի վերանորոգման ժամանակ պատուհանների մակերեսների օպտիմալացում, հաշվի առնելով լուսավորության ավել կամ պակաս լինելը.
- լամպերի և լուսատուների մակերեսի մաքրում.
- առկա շիկացման լամպերի փոխարինում էներգախնայող ցերեկային լույսի և լուսադիոդային լամպերով.
- լուսավորության մակարդակի օպտիմալացում և հսկողություն.
- լուսավորության լամպերի անջատում ոչ աշխատանքային ժամերին.
- տարածքների չափից ավել ջեռուցման կանխում, հատկապես էլեկտրական ջեռուցման ժամանակ.
- ընդհանուր օգտագործման վայրերում շարժման սենսորների տեղադրում:

Էներգախնայողության միջոցառումների ներդրման հետևանքով առավելագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է շատ ուշադիր վերաբերվել տվյալ հարցին և ամեն կերպ փորձել փոխել բնակչության գիտակցությունը դեպի էներգաարդյունավե-տություն: Ծաղկաձոր քաղաքում կա մեկ դպրոց, մանկապարտեզ և գրադարան և հենց այս հաստատություններում է պետք նախևառաջ ներդնել էներգախնայողությունը որպես ապրելակերպ: Դրան կարելի է հասնել տարբեր տեսակի իրազեկման արշավների, աշխատաժողովների, ցուցահանդեսների անցկացման հաշվին, որպեսզի ուսուցիչները, ծնողները և աշակերտները նոր աշխարհայացքի ձևավորման համար գիտելիքներ ձեռք բերեն էներգախնայողության վերաբերյալ և գիտակցեն, որ մեր ապագան կախված է հենց մեզանից:

Դրա համար անհրաժեշտ է.

- բարձրացնել պետական հաստատությունների աշխատողների և սովորողների իրազեկման մակարդակը.
- երիտասարդ սերնդին ներգրավել էներգախնայողության բոլոր միջոցառումներում.
- վարել էներգախնայողության ակտիվ գաղափարախոսական քաղաքականություն, բացատրելով էներգախնայողության կապը շրջակա միջավայրի պահպանության և կյանքի պայմանների բարելավման հետ.
- բարձրացնել իրազեկվածության մակարդակը էներգախնայող տեխնոլոգյաների ոլորտի նորությունների վերաբերյալ.
- էներգիայի սպառման կրճատում դպրոցում, մանկապարտեզում, գրադարանում և աշակերտների և ուսուցիչների ընտանիքներում:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է.

- սեմինարների, վերապատրաստումների, գիտական և գործնական աշխատաժողովների, կլոր սեղանների և էներգախնայողության հարցերի վերաբերյալ մրցումների անցկացում.
- էներգախնայողության վերաբերյալ քաղաքային ծրագրերի մշակում.

- էներգախնայողության և գլոբալ տաքացման վերաբերյալ առարկաների ընդգրկում ուսուցման գործընթացում.
- էներգիայի օրերի կազմակերպում քաղաքում և այլն:

4.2. Բազմաբնակարան շենքեր

Ծաղկաձոր քաղաքի բնակչությունը էներգետիկ ռեսուրսների ամենախոշոր սպառողն է, և աշխատանքը այս ոլորտում ամենաբարդն է: Բնակչության կողմից Էներգիայի սպառման մակարդակի վրա ազդելու հիմնական մեխանիզմներն են.

- էներգակիրների գների փոփոխությունը,
- բնակչության գիտակցության փոփոխությունը,
- էներգախնայողությանն ուղղված միջոցառումների ներդրումը:

Ինչպես արդեն իսկ նշվել է, Ծաղկաձոր քաղաքում կա յոթ բազմաբնակարան շենք և մոտ 400՝ մասնավոր: Այս շենքերի առանձնահատկությունն այն է, որ գրեթե բոլորը կառուցվել են 1970-80թթ.: Ելնելով սրանից, հասկանալի է, որ բնակարանային ֆոնդը այնքան էլ լավ վիճակում չի գտնվում, քանի որ այն ժամանակ էներգախնայողության խնդիրը գրեթե չի դիտարկվել էժան էներգիայի պատճառով: Իրավիճակի բարելավման համար անհրաժեշտ է.

- ակտիվորեն ներգրավել հասարակությանը էներգախնայողության միջոցառումներին.
- անցկացնել հանրային լսումներ էներգախնայողության թեմայով.
- խթանել էներգախնայողությունը քաղաքի բնակչության շրջանում.
- իրականացնել շենքերի ջերմամեկուսման պիլոտային ծրագրեր.
- վերակառուցել և վերականգնել, ինչպես նաև իրականացնել բնակելի տների ջերմամեկուսում և բերել դրանք տեխնիկապես սարքին և արդյունապետ տեսքի.
- աստիճանաբար փոխել բնակելի տների շքամուտքերի լամպերը, ինչպես նաև ստիպել բնակչությանը օգտագործել ցածր հզորությամբ ցերեկային լույսի լամպեր և լուսադիոդային լամպեր սեփական տներում.
- էներգետիկ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման համար մշակել շենքերի սեփականատերերի համար խրախուսման մեխանիզմներ:

4.3. Առանձնատնային կառուցապատման գոտի

Նոր տների կառուցման ժամանակ պետք է բնակչությանը խրախուսել օգտագործել առաջադեմ և էներգաարդյունավետ շինարարական նյութեր, որոնք պետք է.

- լինեն անվտանգ բնակիչների և շրջակա միջավայրի համար.
- լինեն դժվարամաշ և երկարակյաց.
- լինեն խոնավադիմացկուն և ջրադիմացկուն.
- ունենան բարձր ջերմապահպանիչ հատկություններ:

Մեծ օգուտ կտա խորհրդատվական ձեռնարկների տրամադրումը նոր տների սեփականատերերին, քանի որ բնակչության շատ փոքր մասն է իրոք հասկանում էներգախնայողության խնդիրները:

Տվյալ իրավիճակում առավելագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է անցկացնել էներգախնայողական վերջին տեխնոլոգիաների ցուցահանդեսներ, որտեղ անպայման պետք է փորձարկվի արտադրանքը:

Անկախ փորձագետների ներգրավման հաշվին կարելի է կատարել այս կամ այն նյութի կամ սարքավորման օգտագործման տնտեսական արդյունավետության հաշվարկ՝ առավել արդյունավետի բացահայտման նպատակով: Համեմատական «գին-որակ» աղյուսակի մշակումը նույնպես կօգնի սպառողին ավելի արագ ընտրել առավել օպտիմալ տարբերակը:

Քաղաքը էներգաարդյունավետ դարձնելու համար ևս մի միջոցառում է նոր տների կառուցման համար տեղական նորմատիվների մշակումը:

4.4. Քաղաքային փողոցային լուսավորության համակարգը

Ծաղկաձորի փողոցային լուսավորության համակարգի գումարային երկարությունը կազմում է 4 կմ: Համակարգը բաղկացած է 395 լուսատուներից, իսկ յուրաքանչյուր լուսատույի հզորությունը կազմում է 250 Վտ: Ելակետային տարում համակարգի էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է 195 ՄՎտժ:

Տեղակայված լուսատուների մեծժամասնությունը՝ բարձր ճնշման նատրիումային լամպեր են, որոնք էներգախնայողության տեսանկյունից մի քանի անգամ զիջում են լուսադիոդային լամպերին: Սակայն քաղաքային իշխանություններն ակտիվորեն նպաստում են այս բնագավառում էներգախնայողության բարձրացմանը և 2013թ. վերջում կարողացել են իրականացնեն 70 Վտ-ից մինչև 98Վտ հզորությամբ 65 լուսադիոդային լամպերի տեղադրում: Այդ քայլերը ցույց են տալիս փողոցային լուսավորության բնագավառում դրական միտումների մասին, սակայն առավելագույն արդյունքին հասնելու համար դեռևս անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները.

- Փոխարինել բոլո նատրիումային լամպերը լուսադիոդային լուսատուներով:
- Ընդլայնել փողոցային լուսավորության համակարգը, քանի որ դրա երկայնքը բավարար չէ (չի ապահովում բոլոր փողոցների լուսավորությունը):
- Կիրառել լուսավորության սարքերի աշխատանքի կարգավորման ավտոմատ համակարգ:
- Կիրառել շարժման սենսորներ բնակավայրի կենտրոնից հեռու գտնվող և ոչ մարդաշատ վայրերում:
- Ֆոտոէլեմենտների տեղադրում լուսավորության սարքերի վրա:

4.5. Տրանսպորտային սեկտոր

Ծաղկաձորի տրանսպորտային ենթակառուցվածքը շատ զարգացած չէ: Այս հանգամանքը բացատրվում է քաղաքի փոքր չափերով: Այսպիսով չկա քաղաքային տրանսպորտի անհրաժեշտություն, քանի որ բնակչության մեծամասնությունը օգտվում է մասնավոր

փոխադրամիջոցներից: Չնայած այդ հանգամանքին, պահանջվում է իրավիճակի որոշակի փոփոխություն, որպեսզի բարելավել քաղաքի բնապահպանական վիճակը:

Տրանսպորտային սեկտորում հիմնական միջոցառումներ են հանդիսանում.

- Ճանապարհային ծածկույթի տեխնիկական վիճակի վերլուծություն և բացահայտված թերությունների շտկում:
- Քաղաքում տրանսպորտային երթևեկության կատարելագործման աշխատանքների կազմակերպում:
- Վտանգավոր արտանետումների նվազեցման նպատակով, բնակչության կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցների թարմացման խթանում:
- Պատճամիջոցների կիրառում այն վարորդների նկատմամբ, որոնք օգտագործում են ոչ պատշաճ տեխնիկական վիճակում գտնվող տրանսպորտային միջոցներ (հատկապես խոսքը գնում է շարժիչների մասին):
- Էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների թվի մեծացում:
- Կոմունալ տրանսպորտի վերազինում՝ բնական գազով աշխատելու նպատակով:
- Ոչ ավանդական, վերականգնվող էներգիայի աղբյուրների և այլընտրանքային վառելիքների կիրառում շարժական և ստացիոնար օբյեկտներում:
- Բնակչության կողմից տրանսպորտային միջոցների բնական գազով աշխատող սարքավորումներով վերազինման խթանում՝ ածխաթթու գազի արտանետումների նվազեցման նպատակով (ներկայումս քաղաքում առկա տրանսպորտային միջոցների մոտ 80% արդեն աշխատում է բնական գազով):
- Հեծանիվային սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում:
- Բնակչության կողմից մասնավոր մեքենաների փոխարեն հեծանիվների օգտագործ-ման խթանում, առավել ևս, որ քաղաքի չափերը դրան նպաստում են և այլն:

ԲԱԺԻՆ 5. Գործողությունների ծրագրի մշակման և ներդրման վարչական կառուցվածքը

5.1. ԿԷԶԳԾ-ի մշակման և ներդրման վարչական կառուցվածքը



5.2. Մոնիտորինգ և վերահսկում

Մոնիտորինգը և վերահսկումը ներառում են միջոցառումներ, որոնք կոչված են որոշել ԿԷԶԳԾ-ում սահմանված գործողությունների իրականացման կարգավիճակը և որակը, ինչպես նաև բացահայտել հնարավոր խնդիրները և դրանց ժամանակին լուծման համապատասխան միջոցառումները: Այդպիսով, հիմնական նպատակն է ապահովել պարբերաբար մոնիտորինգ և միջոցառումների իրականացման գործընթացի գնահատում, որպեսզի ժամանակին բացահայտել հնարավոր շեղումները ԿԷԶԳԾ-ից:

Այս խնդրի շրջանակներում նախատեսվում է էներգետիկ մոնիտորինգի համակարգի ներդնում, որը էներգետիկ մենեջմենտի հիմքն է տեղական մակարդակով: Դրանով իսկ ստեղծվում է հնարավորություն տեղական ենթակառուցվածքների կողմից էներգասպառման անընդհատ (ամենամսյան) վերահսկման համար: Նույնպես անհրաժեշտ է ապահովել քաղաքապետարանում էներգետիկ հարցերով պատասխանատու մասնագետի (էներգամենեջերի) նշանակումը, որը պետք է պարբերաբար հավաքի վիճակագրական տվյալներ էներգասպառման վերաբերյալ բոլոր բնագավառներում և վերահսկի ԿԷԶԳԾ-ի իրականացման գործընթացը:

ԿԷԶԳԾ-ի մշակման և ներդրման ընդհանուր պատասխանատվությունը դրված չէ մեկ կոնկրետ անձի կամ բաժնի վրա: Քանի որ աշխատանքը բոլոր սեկտորներում պետք է լինի համախմբված և պետք է բերվի «ընդհանուր հայտարարի», ապա ԿԷԶԳԾ-ի չիրականացման համար պատասխանատվությունը կրում է ամբողջ քաղաքը:

Հարկավոր է ընդգծել, որ համապատասխան տեխնիկական կամ վարչական միջոցառման իրականացման արդյունավետ վերահսկման համար ահրաժեշտ է նշանակել պատաս-խանատու անձ, ով պատասխանատվություն կկրի միջոցառման անորակ կան ոչ ժամանակին իրականացման դեպքում:

Համաձայն ստանձնած պարտավորությունների, երկու տարին մեկ անգամ քաղաքապետա-րանը «Քաղաքապետերի դաշնագրի» գլխավոր գրասենյակին հաշվետվություն կներկայացնի ԿԷԶԳԾ-ում նշված միջոցառումների իրականացման վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 6. Ֆինանսավորման աղբյուր

Տվյալ բաժնում դիտարկվում են Ծաղկաձորի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրում սահմանված միջոցառումների ֆինանսավորման հնարավոր աղբյուրները:

Ֆինանսական բաղադրիչը հանդիսանում է Քաղկաձորի կողմից Քաղաքապետերի դաշնագրի շրջանակներում սահմանված նպատակների իրականացման գործընթացի անբաժանելի մասը:

Ծաղկաձորում 2013-2020թթ. ընթացքում նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը կարող է իրականացվել հետևյալ աղբյուրներից.

- Տեղական բյուջե
- Այլ մակարդակների բյուջեներ (մարզային, պետական)
- Ձեռնարկությունների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց սեփական միջոցներ և բյուջեներ
- Միջազգային և պետական վարկային հիմնադրամներ
- Էներգասպառման արդյունքում տնտեսված ֆինանսական միջոցներ
- Միջազգային տեխնիկական աջակցություն
- Սպոնսորների և դոնոր կազմակերպությունների միջոցներ
- Պետական և միջազգային նպատակային ծրագրեր և դրամաշնորհներ:

Ամենամեծ խնդիրն, որն առաջանում է դրված նպատակների իրականացման ընթացում, հանդիսանում է քաղաքային բյուջեի սահմանափակությունը, որը թույլ չի տալիս ապահովել էներգաարդյունավետության բարձրացմանն, էներգախնայողության ապահովմանը և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը:

Հաշվի առնելով այս խնդիրը, Ծաղկաձորի քաղաքապետարանը և իր ենթակայության տակ գնտվող համապատասխան ենթակառուցվածքները կաշխատեն օգտագործել բոլոր հնարավոր ֆինանավորման աղբյուրները, որոնց թվին կարելի է դասել. սեփական միջոցները, նպատակային ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից հատկացվող միջոցները, տեխնիկական աջակցությունը, վարկային միջոցները, շրջանառու ֆոնդերի կիրառումը և էներգամատակարարող ընկերությունների ներգրավումը:

Քաղաքապետարանի միջոցները կուղղվեն բոլոր պարտադիր նախանախագծային աշխատանքների, ինչպես նաև սակավ ներդրումներ պահանջող և կարճ ետգնման ժամկետով միջոցառումների ֆինանսավորման համար:

Պետական բյուջեի միջոցները կօգտագործվեն նպատակային ծրագրերի իրականացման և պետական-մասնավոր սեկտորների գործընկերության խթանման, ինչպես նաև նախարարությունների և գործակալությունների աջակցության ստացման համար:

Ծաղկաձորը հետևողականորեն մասնակցում է էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման հետ կապված միջազգային տարբեր ծրագրերին: Այդ համագործակ-

ցության շնորհիվ քաղաապետարանը ստանում է կարևոր փորձ և էներգախնայողական միջոցառումների իրականացման հնարավորություն: Տեխնիկական աջակցության անբաժանելի մաս են հանդիսանում նաև գրանտային ծրագրերը, որոնք թույլ են տալիս իրականացնել ցուցադրական նախագծեր, ինչը բարձրացնում է ոչ միայն էներգախնայողության մակարդակը, այլ նաև քաղաքի վարկանիշը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Էներգակիրների տնտեսմանն ուղղված համալիր միջոցառումները 2011-2020թթ. համար

№	Միջոցառում	Կատարող	Ֆինանսա-վորման ծավալ	Էներգետիկ ռեսուրսների տնտեսում		Տնտեսում (կրճատում)	Իրակա-նացման տարի
				Բնական գազ	Էլ. էներգիա		
			հազար €	ՄՎտժ	ՄՎտժ	տ CO_2	
Բյուջետային սեկտոր							
1	Էներգատիկ մենեջմենտի համակարգի կիրառում (համայնքային կառույցների էներգասպառման տվյալների պարբերկան մոնիտորինգ և վերլուծություն, էներգետիկ հաշվեկշռի օպտիմալացում)	Քաղաքա-պետարան	3	27,9	12	8,3	2013-2015թթ.
2	Մանկապարտեզի համալիր ջերմամեկուսացում և արևային ջրատաքացուցիչների կիրառում	Քաղաքա-պետարան և ԳԷՖ-ի ՓԳԾ	55	111,6	6,5	24,0	2014-2015թթ.
3	Միջնակարգ դպրոցի շենքի ջերմամեկուսիչ հատկությունների համալիր արդիականացում (ուշեղացում)	Քաղաքա-պետարան և մարզպետա-րան	45	74,4	1,75	15,4	2015-2017թթ.
4	Բյուջետային հաստատություններում լուսավորության սարքերի փոխարինում	Քաղաքա-պետարան	2	0	9	2,0	2014-2016թթ.
5	Քաղաային լուսավորության համակարգի կապիտալ վերանորոգում	Քաղաքա-պետարան	10	0	20,4	4,4	2013թ.
			65	0	124	27,0	2014-2018թթ.
6	Քաղաքի բյուջետային բնագավառի կառույցներում արևային ջրատաքացուցիչների տեղադրում	Քաղաքա-պետարան	23	48,36	0	9,8	2015-2017թթ.
Ընդհամենը բյուջետային սեկտոր			**203**	**262,26**	**173,65**	**90,8**	

№	Միջոցառում	Կատարող	Ֆինանսա-վորման ծավալ	Էներգետիկ ռեսուրսների տնտեսում		Տնտեսում (կրճատում)	Իրակա-նացման տարի
				Բնական գազ	Էլ. էներգիա		
			հազար €	ՄՎտժ	ՄՎտժ	տ CO_2	
Բնակելի սեկտոր							
7	Բնակելի ֆոնդի կապիտալ վերանորոգում	Քաղաքա-պետարան և մարզպետարան	140	223,2	0	45,1	2014-2020թթ.
8	Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում առանձնատներում	Քաղաքապետա-րան և տների սեփականատե-րեր	300	130,2	8	28,0	2014-2018թթ.
9	Բազմաբնակարան շենքերի ճակատների համալիր ջերմամեկուսացում և նորոգում	Քաղաքա-պետարան	200	358,05	0	72,3	2015-2020թթ.
10	Էներգախնայողական տեխնոլոգիաների, այդ թվում նաև էներգաարդյունավետ լամպերի, ներդնում բազմաբնակարան շենքերում	Քաղաքապետա-րան և բնակա-րանների սեփա-կանատերեր	4	0	42,5	9,3	2014-2020թթ.
11	Էներգախնայողական լամպերի կիրառում առանձնատներում	Քաղաքապետա-րան և տների սեփականատե-րեր	11	0	85	18,5	2015-2020թթ.
12	Արևային ջրատաքացուցիչների կիրառում բնակելի տներում	Քաղաքապետա-րան և տների սեփականատե-րեր	300	651	0	131,5	2015-2018թթ.
Ընդամենը բնակելի սեկտոր			**955,0**	**1362,5**	**135,5**	**304,8**	

№	Միջոցառում	Կատարող	Ֆինանսա-վորման ծավալ	Էներգետիկ ռեսուրսների տնտեսում		Տնտեսում (կրճատում)	Իրակա-նացման տարի
				Բնական գազ	Էլ. էներգիա		
			հազար €	ՄՎտժ	ՄՎտժ	տ CO_2	
Տեղեկատվական աշխատանքներ							
13	Էներգետիկ օրերի անցկացում	Քաղաքա-պետարան	4	18,6	22,0	5,2	2014-2020թթ.
14	Շենքերի համար էներգետիկ սերտիֆիկատների մշակում	Քաղաքա-պետարան	3	9,3	22,0	5,0	2014-2020թթ.
15	Ուսուցումների և սեմինարների կազմակերպում դպրոցների աշակերտների, ուսանողների, բյոջետային հիմնարկների աշխատակիցների և հյուրանոցային համալիրների աշխատողների համար	Քաղաքա-պետարան	5	27,9	68,8	15,6	2014-2020թթ.
16	«Երկրագնդի ժամ» միջոցառման անցկացում	Քաղաքա-պետարան	1	46,5	45,8	11,0	2014-2020թթ.
17	Էներգախնայողության խթանում ԶԼՄ-ների միջոցով	Քաղաքա-պետարան	8	48,4	7,3	2,6	2014-2020
18	Միջնակարգ դպրոցում էներգաարդյունավետության և էներգախնայողության մասին դասընթացների անցկացում	Քաղաքա-պետարան	2	22,3	7,2	2,1	2014-2020թթ.
19	Բնակապահպանական կառույցների և դպրոցների ուսանողների ներգրավում քաղաքի էներգետիկ զարգացման գործընթացներին	Քաղաքա-պետարան	3	38,1	8,3	2,6	2014-2020թթ.
20	Դպրոցականների ներգրավում դպրոցներում էներգաարդյունավե-տության բարձրացման ծրագրերի մշակմանը և լավագույն ծրագրի ընտրության մրցույթների անցկացում	Քաղաքա-պետարան	5	21,4	7,7	2,1	2014-2020թթ.

21	Էներգախնայողության վերաբերյալ դասագրքերի (գնում) մշակում	Քաղաքա-պետարան	20	44,6	8,4	2,8	2014-2020թթ.
22	Քաղաքում «կանաչ» շինարարության խթանում	Քաղաքա-պետարան	5	60,5	5,7	2,6	2014-2020թթ.
Ընդամենը տեղեկատվական աշխատանքներ			**56**	**338**	**203,2**	**51,6**	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբեր 2014 թվականի թիվ 81

"ԾԱՂԿԱԶՈՐ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել "Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն" համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2014 թվականի հունիսի 13-ի "Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն" համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին" թիվ 49 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու
2014 թվականի հոկտեմբերի 24-ի
թիվ 81 որոշման

"ԾԱՂԿԱՁՈՐ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 23
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքա-չափը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)	Ընդամենը
1	տնօրեն	1	1	100000	100000
2	գլխ. հաշվապահ	1	1	96000	96000
3	Հաշվ.գանձապահ	1	1	67000	67000
4	ճարտարագետ	1	1	93000	93000
5	վարորդ	2	1	97700	195400
6	վարորդ	3	1	93000	279000
7	բանվոր	3	1	93000	279000
8	հավաքարար	5	1	80000	400000
9	պահակ	3	1	66500	199500
10	գրեյդերավար, մեխանիկ	3	1	133000	399000
	ԸՆԴԱՄԵՆԸ	23			2107900

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ